ԵՐԿՈՒ ԵՐԳ ՇԱՐԼ. ՊՕՏԼԵՐԻ ՓՆԱՐԷՆ

ԱԼԲԱՏՐՈՍ

Բազում անգամ նաւագներն ըղբօսնելու ի խնդիր՝
Ալբատրոսնե՛ր կը բռնեն, մեծ թռչուններ ծովերու,
Որոնք՝ անվոյթ ընկերներ ճանապարհի՝ թեւ ի թի՛ւ
Անդունդներու վրայ սահող կը հետեւին նաւերու։

Տախտակամած դեռնին վրայ հապի՛ւ զանոնք են դրրեր՝
Արքաներն այս կապոյտին, ամօթապա՛ռ, անճարա՛կ,
Ողորմագին կը թողուն ընդ քարշ ածել գերդ թիեր
Իրենց երկու կողերուն՝ մեծդի թեւե՛րն ըսպիտակ։

Ուղեւորն այս օդաչու ի՞նչ տըկար է, ձախաւեր,
Ինք՝ նախ ա՛յնքան զեղեցիկ, այժմ ինչ տըգե՛ղ, ծաղրալի՛,
Մին՝ կը կապկէ կաղալո՛վ զինք՝ որ առաջ կը թեւէր,
Ծըխամորճով կըտուցի՛ն հետ միւսն ահա կը դրաղի։

Որ որսորդի՛ն է հեղնող, փոթորիկին ընտանի,
Եւ բանտասե՛ղծն իշխանի՛ն կը նըմանի ամպերու.
Ոռնոցներո՛ւ մէջ դաժան, աքսորակա՛ն վրայ երկրի,
Ո՛հ, հսկայի կ՚արդիլեն թեւերն իրեն քալելու։

Հոռոմ, 1946

ԿՈՅՐԵՐԸ

Դիտէ՛ զանոնք, ո՞վ հոգիս, սոսկալի է՛ն խկապէս,
Տարտամօրէն ծաղրաշարժ խրտուիլակնե՞ր են կարծես.
Զարհուրելի, եղական, քընաշրջիկ գերդ մարդեր,
Գունդերն իրենց մրթապատ յառելով ո՞ւր՝ չե՞ս դիտեր։

Աչքերն իրենց ուրկէ խո՛յս կայծն երկնային է տըւած,
Կարծես հեռուն նայէին՝ կը յամենան վերամբարձ
Դէպի երկինք, չես տեսներ զանոնք երբեք՝ որ դեռին
Գըլուխն իրենց ծանրացած վայրահակե՛ն ցնորադին։

Այսպէս կ՚անցնին ընդմէջէն անոնք մութին անսահման,
Յաւերժական լռութեան եղբայրն այս, մինչ ո՞վ ոստան,
Կ՚աղաղակես զուն մեր շուրջ, կը ծիծաղիս, ու կ՚երգե՞ս։

Անդըթութեան ասոիճան հաճոյավառ, ահա տե՛ս
Ընդ քարշ կ՚ածեմ ես ալ դի՛ս, բայց քան զանոնք ապշօրէ՞ն,
Ինչ կ՚որոնեն երկնից մէջ, կ՚ըսեմ, կոյրե՛րն այս ամէն։

Հոռոմ, 1946

Թարգմանեց՝ ՀՐԱՉ ՔԱՋԱՐԵՆՑ

ԷՋՄԻԱԾՆԻ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

1655 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(Շար. տես Բազմ. 1948, թ. 7–8, էջ 157)

Գ.

Երեկոյեան ժամերգութիւնները վերջանալուն՝ Հայրապետը զիս փնտռել տուաւ ըսելու համար՝ որ այդ օրը միւսներէն աւելի զուարճանալու սովորութիւնը, որքան ալ անոնք չունէին, սակայն և այնպէս աղէկ գիտնալով որ Եւրոպացի Քրիստոնեաները մեծ խրախճանութիւններ կ՚ընեն, ինքն ալ ուստի կ՚ուզէր որ թէ ես և թէ ի Քրիստոնեայ երկիրները գնացող վաճառականները գոմիշամարսի մը տեսարանով զուարճանայինք։

Այդ կենդանանիները բազմաթիւ են այդ երկրին մէջ, ուր հողագործութեան կը ծառայեն։ Անոնց էգերն ալ առատ կաթ կու տան, որմէ՝ զայն ուրիշ կաթերու հետ խառնելով, կարագ և պանիր կը պատրաստուի։

Այդ կռիւը տեսնելու համար զմեզ շըրջապատուած տեղ մը տարին, ուր ութը գոմէշներ կային։

Զանոնք իրար դէմ գայրացնելու համար կարմիր լաթ մը անոնց ցոյց տուին, որմէ իսկոյն այն ասոիճան կատղեցան որ կոտոշներու առաջին հարուածներուն՝ երկու հատը արդէն գետին ինկան փռուեցան։ Վերջ ի վերջոյ անմէնքն ալ խեղանդամ մնացին։

Կռիւը լմնցածին պէս մեծ քանակութեամբ փայտեր բերին, զանոնք իրարու վրայ դիզելով, որպէս զի կրակը տրուի, ինչպէս Ս. Յովհաննէսի տօնին գիշերը Ֆրանսայի մէջ սովորութիւն է ընել։

Փայտերը շեղջ առ շեղջ երբոր շարուեցան՝ Արքեպիսկոպոսներէն մին բոլոր ներկաներուն ճերմակ մեծ մոմ մը տուաւ, տէրերուն ինչպէս նաեւ անոնց սպասաւորներուն, որոնք յայտնեցին անոր թէ հետեւեալ օրուան մոմեղէններուն լուսաւորութեան համար ի՞նչ տրամագիր էին տալ։ Մոմերը վառուեցան. իւրաքանչիւրը իրեն մոմը ձեռքին մէջ բռնած էր։ Հայրապետը, եպիսկոպոսական գաւազանը ձեռքը, շարական մը երգելով սկսաւ քալել։

Եկեղեցական և աշխարհական, ամէնքն ալ անոր հետեւելով, շեղջակոյտ այդ դէզին բոլորտիքը երեք անգամ շրջեցան։

Բայց որովհետեւ խնդիրը անոր կրակը տալու մէջ կը կայանար, վաճառականներէն մին՝ այդ պատիւը ունենալու համար, ըսաւ թէ պատրաստ էր մեծ քանակութեամբ ձէթ տալ Եկեղեցւոյն կանթեղներուն համար։ Երկրորդ մը եկաւ անոր տալիքէն աւելի խոստանալու։ Երրորդ մը այս վերջինիս նուիրածէն դեռ աւելի տալու յօժար էր։ Վերջապէս՝ կրակը տալու պատիւը ամենաշատ նուիրողին մնաց։

Ասոր վրայ ամէն մարդ իր մոմը մարեց, մեծ խնամքով զայն պահելու դիտաւորութեամբ. որովհետեւ անոնք աներկբայ վստահութիւնը ունին որ ծովուն վրան գտնուած ատեններն, երբոր փոթորիկ մը հանդիպի, այդ մոմերէն հատ մը վառելով և աղօթք մ՚ալ զուրցելէն յետոյ, եթէ զայն ծովը նետէին, մրրիկը իսկոյն կը դադրէր։

Հետաքրքրութեան համար անոնց հարցուցի թէ կրակին և մոմերուն այդ արա-

digitised by R.A.R.@

բողութիւնը ուսկից ծագում առած էր։ Ահաւասիկ ինծի տրուած պատասխանը.

«Սուրբ Կոյսը, որ ծննդաբերութենէն քառասուն օր վերջը, իր Յիսուս Զաւակին և Յովսէփին հետ Երուսաղէմ եկաւ և գնաց Տաճարը՝ ուր Սիմէոնը կը գտնուէր. ծերունի այդ Սիմէոնը Փրկիչն իր թեւերուն մէջ առնելով սկսաւ հոգեւոր տաղերգը։ Seigneur, tu laisses maintenant aller ton serviteur en paix selon ta parole, et ce qui suit [1]. Օրհնութեան Երգը [cantique] լմնցածին պէս ժողովուրդը սկսաւ աղաղակել որ Տէրը ծնած էր, և տաճարէն դուրս ելլելով ամբողջ քաղաքին բարձրաղաղակ իմաց տուաւ։ Եւ որովհետեւ գիշեր ատեն էր, ամէն մարդ ձեռքին մէջ ճրագ բռնած, դէպ ի Տաճարը վազեց. և շատերը իրենց դռներուն առջեւ կրակներ վառեցին՝ համարելով որ Տէրը անոնց առջեւէն պիտի անցնէր։ Ահաւասիկ ինչ որ այդ առթիւ ինծի զուրցուեցաւ»։

Դավեռնիէ՝ որ (մոռնալու չէ) բողոքական էր, շարունակելով կը գրէ. «Հայոց այս արարողութիւնը Chandeleur=Շանտելէօռին նման ոչ մ'է զոր անոնք իրենց լեզուով, ter en areche [զոր Ֆրանսացին տէր ան առէշ պիտի կարդայ] կ'ըսեն, այսինքն՝ ou est le Seigneur=ուր է Տէրը»։

Հոս հարկ պիտի ըլլայ պահ մը կանգ առնել ճշտելու համար թէ ինչ տարբերութիւն կայ Լատինացւոց Chandeleur կամ Candeloro կոչումին և Հայերէնին Տեառնընդառաջին միջեւ, զոր Դավէռնիէն խաթարեալ կերպով յիշատակած է։

(1) Ղուկաս Աշխ. գլ. Բ. 29. – «Արդ արձակես զծառայս քո, ըստ բանի քում, ի խաղաղութիւն զի տեսին ա՛չք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց։ Լոյս [որուն խորհրդանշանն է ճրագը] ի յայտնութիւն հեթանոսաց, և փառք ժողովրդեան քում Իսրայէլի»։

Սիմէոն Ծերունին, ուրեմն, Երեք Մոգերէն յետոյ, առաջին Քրիստոնեայն է։ Լ. Կ.

Առաջինը, պարզաբար լուսաւորութիւն, հրավառութիւն մ'է որ, ինչպէս պիտի տեսնենք, Յունիս 24ին ալ Եւրոպիոյ մէջ կը կատարուի, մասնաւորապէս Հռոմի մէջ, Սան Ճիովաննիի ծննդեամբութեան գիշերը։ Այսպէս, Աւագ Ուրբաթ գիշերուան զէմ, ի յիշատակ Քրիստոսի չարչարանքին, և Դեկտ. 8ին՝ ի պատիւ Աստուածածնի։

Մինչդեռ հայոց Տեառնընդառաջը՝ է տօն քառասնօրեայ գաղտնեան Յիսուսի ի տաճարն, ռամկօրէն Տէրընտաս։

Արեւելեան և Արեւմտեան Տոմարները, որքան որ ամէն դարու վերջաւորութեանը օր մը աւելի իրարմէ կը հեռանան, այսուհանդերձ Քրիստոնէութեան հիմնական այս Տօնը (Յիսուսի Տաճարին մէջ առաջին անգամ գալը) Փեբր. 2ին կը շարունակեն անփոփոխ պահել։

Օրէնսդիր և մեծահռչակ Յուստինիանոս արքային օրով ընդհանուր Քրիստոնէութիւնը, Արեւելքի և Արեւմուտքի մէջ, Տէրընտասը միեւնոյն օրը կը տօնէր։ Դավէռնիէի ապրած դարուն, այսինքն Յուստինիանոսէն տասը դար վերջը, տասը օրի տարբերութեամբ. և ներկայիս, 1900ի ընթացքին՝ 13 օր։

Առանց երկարելու այս տարբերութեան պատճառին վրան՝ որ գիտական հարց է, Լատին Եկեղեցւոյն կոչած Chandeleurը Իտալերէն Candeloro, Հայերէնին մէջ կը նշանակէ ճրագներուն օրը, ճրագալոյց, զոր Հայկական Եկեղեցին՝ հինէն ի վեր, իբր նախատօնակ կը կատարէ Ծննդեան և Յայտնութեան Տօնին, և ո՛չ ուրիշ առթիւ։ Թէպէտ յետագայ դարերուն մուտք գտած է նաեւ Զատկի նախատօնակին ալ ճրագալոյց ընել ի նշան Քրիստոսի ցնծալի յարութեանը, նա մանաւանդ Աւագ Ուրբաթին գիշերուան սգաւոր տխրութենէն և մթութենէն յետոյ՝ ի նշան Յիսուսի կրած չարչարանքին և մահուան։

Սակայն՝ լեզուագիտական այդ ճիշդ առ ճիշդ ունեցած համապատասխանութեամբ հանդերձ, Chandeleur չի բացատրեր այդ օրուան տօնին ծագումը և խորհրդաւոր իմաստը, որքան Հայերէնին Տեառնընդառաջը՝ որուն Դավէռնիէ հետաքրքրուած էր՝ խաթարեալ իր յիշատակութեամբը հանդերձ։ Եւ ասիկա շատ բնական բերմամբ, քանզի Տեառնընդառաջ Հայ բառին ճշգրտօրէն համապատասխանող բառը Եւրոպական լեզուներուն կը պակսի և կը գոհանան գործածել presentazione al tempio, որ է Տաճարին ներկայանալը. մինչդեռ ներկայացողը Մայրն է և ո՛չ Զաւակը. ու կամ Festa di Purificazione, որ է Տօն Սրբուհեան Կուսին՝ որ աւելի ճիշդն է։ Արդարեւ, ըստ Իսրայէլացւոց օրէնքին, ծնող մայրը օրինական մաքրութեան համար, տղաքերքէն 40 օր վերջը պէտք էր որ Տաճարը ներկայանար։ Եւ գիտելի է որ Արեւելքի մէջ ծննդաբերող կինը քառասուն օր վերջը բաղնիք առնելու սովորութիւնը կայ։

Ահա թէ ինչո՞ւ Տիրամայրը, Մանուկն ալ միասին, Տաճար ներկայացած էր. որուն առթիւ Սիմէոն ծերունին զոհութեան երգը ազօթեց. որուն պարզ մեկնութիւնն է, այլ եւս կրնամ խաղաղութեամբ աչքերս գոցել, քանի որ անոնք Մարդկութիւնը լուսաւորող Փրկիչը տեսան։ Ծերունի Սիմէոնը, Տեառնընդառաջին օրը, այս եղանակով կանխեց Յիսուսի Մկրտութեան պահուն եղած Յայտնութիւնը. Դա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ։

Եզրակացնելով՝ Հայերէնի մէջ Տեառնընդառաջը եկեղեցական հնաւանդ տօն մը կը յատկանշանէ։ Իսկ Chandeleurին համապատասխանող ճրագալոյցը՝ Յիսուսի Ծննդեան և Մկրտութեան տօներուն նախընթացին յատկացեալ լուսաւորութիւն մը, որ այդ երկու հիմնական Տօներուն Եւրոպիոյ մէջ իրարմէ հեռանալուն հետեւանքով, տեղափոխութիւն կրեց։ Այդպէս է որ այդ Քրիստոնեայ երկիրներուն մէջ Յունիս 24ի իրիկունը բլուրներուն վրան հրավառութիւններ ընելու սովորութիւնը կայ, որովհետեւ այդ օրը Յիսուսը մկրտող Ս. Յովհաննէս Կարապետին ծննդեան կը համապատասխանէ [2]։

***

Դավէռնիէն՝ շարունակելով իր նկարագրութիւնը, կը հաղորդէ. «Հանդէսը վերջանալուն պէս՝ զանգակը զարկին և ամէնքը եկեղեցի վերադարձան, որմէ վերջը ցրուեցան։ Ամբողջ այդ գիշերը, տէր և սպասաւոր, բարեկենդանը լմնցնելու համար գինի խմելը չմոռցան։ Հայրապետն ալ, իր կողմէն, եկեղեցին շքեղապէս զարդարելու զբաղեցաւ»։

Դավէռնիէ այս առթիւ հայոց բարքերուն վրան ուշագրաւ տեղեկութիւններ կու տայ։ «Չէի կրնար երբեք հաւատալ, կ'ըսէ, որ Մահմետական Տիրապետութեան ենթարկուած Քրիստոնեաներու Եկեղեցիներուն մէջ այդքան հարստութիւններ կրնային գտնուիլ։

Հարիւր տարի առաջ՝ Հայրապետական այդ Եկեղեցին՝ այդքան մեծահարուստ կերպով չէր զարդարուած։ Ինչ որ եղաւ՝ Շահ–Աբաս Պարսից Մեծ Աբքայն Հայերը վաճառականութեան մղելուն հետեւանքով է, որով անոնք հարստացան։

Ի սկզբան մեծամեծ շահեր ըրած ըլլալով, անոնք ուխտեր կատարեցին՝ առատաձեռնօրէն նուէրներ տալով այս Եկեղեցիին, որուն ունեցած զարդարանքները Քրիստոնէութեան ո՛չ մի Եկեղեցիի մէջ կը գտնուին։

Եկեղեցիին կեղրոնական ներքնամասը վենետկեան ոսկեթել դիպակներով զարդարուած է. անոր զոնէն մինչեւ դասը և խորանը առաջնորդող աստիճանները յարգի գորգերով ծածկուած են։

Որովհետեւ Եկեղեցի մտնողը կօշիկները կը հանէ և Հայերը, Եւրոպացիներու պէս չեն ծնրադրեր, այլ ոտքի վրայ կը կենան։

(2) *Martyrologium Romanum*. 24 Junii. Nativitatis Sanctii Joannis Baptistæ precursoris Domini.

digitised by A.R.A.R.@

Տեղական սովորութեամբ, պատարագին ատենը ծալապատիկ կը նստին։ Աւետարանին ընթերցման ատեն ոտքի կ'ելլեն։

Աստուածանուէր պաշտօնին (Office) բոլոր ընթացքին գլուխնին գոց կը պահեն՝ ինչուան Սրբութիւն Սրբոցը. որովհետեւ այդ ատենն է որ շարփուշը (toque) գլխէն կը հանեն և երեք անգամ երկիր կը պագնեն, baisent la terre.

Խորանին վրան խաչ մը դրուած էր և վեց ոսկեձոյլ աշտանակներ. և ասպիճաններուն վրան՝ շուրջ վեց ոտնաչափ [1 մեղը, 65 հրդ.] բարձրութեամբ չորս արծաթեայ աշտանակներ։

Կարգ մը շարականներ երգելէն յետոյ՝ հայրապետը եկաւ մեռաքսեայ գորգով ծածկուած աթոռի մը վրան բազմելու։ Անոր աջակողմը գտնուող մոյթին քով ալ չորս Արքեպիսկոպոսներ նստեցան։ Սրբազան պաշտօնը ամբողջապէս Արքեպիսկոպոս մը կատարեց, իր քովը ունենալով երկու Եպիսկոպոսներ։

Արարողութեան ատեն կատարուած սպասաւորութիւնը, կը յարէ Դավէռնիէն, Հայոց Կրօնքին վրան խօսած ատենս պիտի զուրցեմ։

Յետոյ Հայրապետը, Թագաւորին [Լուդովիկոս ԺԴ] և արքայազուն Օռլէանի Դուքսին համար աղօթել տուաւ։

Անկէ վերջը Արքեպիսկոպոսը՝ իր կարգացած Աւետարանին գիրքը առնելով, Հայրապետին, Արքեպիսկոպոսներուն Եպիսկոպոսներուն և ժողովուրդին համբուրել տուաւ։

Այդ գրքին կողքին մէկ կողմը մասունքներ ազուցուած են, բիւրեղով մը ծածկուած. այդ կողմն է որ համբուրել կու տան։

Արարողութիւնը վերջանալուն՝ Հայրապետը օրհնութիւնը տուաւ ժողովուրդին։ Շատերը գնացին անոր աջը համբուրելու. և ժողովուրդը դուրս ելաւ »։

Դավէռնիէին տուած այս նկարագրութենէն կը հեռեւի որ անոր օրով պատարագը վերջանալուն Աւետարանը համբուրել կու տային։

Արդեօք հիմա՞ ալ Հայաստանի մէջ այդպէս կը շարունակուի ու կամ բոլորովին փոխուած է։

***

« Երեւանի վրայ խօսելէն առաջ այդ քաղաքին շրջակայները գտնուող մանրամասնութիւններուն նկատմամբ մի քանի խօսք կ'ուզեմ զուրցել։ Երեւանէն տասը մղոնի չափ հեռու լիճ մը կայ [Սեւանայ լիճին կ'ակնարկէ] որուն մէջ կղզի մը կայ, ուր գեղեցիկ վանք մը կառուցուած է։ Անոր վանականները յոյժ խստամբեր կեանք մը կը վարեն։ Տարին չորս անգամ միայն միս կամ ձուկ կ'ուտեն։ Այդ չորս օրերուն մէջ միայն իրարու հետ կը խօսին։ Տարւոյն մնացեալ մասը՝ բանջարանոցէն ժողոված կանանչեղէնի նման, խոտեղէն միայն կ'ուտեն. որովհետեւ, կ'ըսեն, ծոմապահութիւնը կարագ և ձէթ ուտելուն մէջ կը կայանայ։

Կերած հացերնին մօտակայ գիւղերէն կը բերեն, և այդ կղզեակին մէջ ամէն տեսակ ընտիր պտուղներ կը հասնին։

Այդ լիճին կողմերը, Երեւանին աւելի մօտիկը, ընդարձակ դաշտավայր մը կայ, ուր վեց վանքեր կը գտնուին։

Առոնցմէ մին, որ քարաժայռի մը վրան նստած է, իր Եկեղեցիովը և զայն վերցնող մոյթերովը միասին ամբողջապէս ժայռին մէջ փորուած է. Հայերը այդ Եկեղեցիին kickart [գու կարդա՛ գեղարդ] անունը կու տան և թուրքերը՝ իրենց լեզուով՝ Guieurguieche [կէօր կիչ = տե՛ս և անցի՛ր] որ ըսել է *voi et passe*.

Ըստ Հայոց աւանդութեան՝ այդ Եկեղեցիին մէջ պահուած է Յիսուս–Քրիստոսի կողը ծակող տէգին (գեղարդ) երկաթը, զոր ուզողին ցոյց կու տան, բա՛ւ է ժամերգութեան վերջանալուն հոն գտնուիլ։ Եւ Դավէռնիէն կ'աւելցնէ ստորագծելով « ահաւասիկ պատկերը զոր հետաքրքրութեան համար տեղւոյն վրան գծեցի »։

Այս գեղարդը կ'ըսեն որ Ս. Մատթէոսը այդ տեղը բերաւ։ Երեւանէն հինգ մղոն դէպ ի Արեւելեան–Հարաւ, ու կամ ձմեռուան Արեւելքը, կը սկսի Արարատ լեռը զոր Նոյին տապանը, որ անոր վրան նստաւ, ցյաւիտեանս աշխարհահռչակ պիտի ընէ. և որուն նկարագրութիւնը քիչ վերջը պիտի տամ։

Այդ լեռնէն կէս մղոն հեռու, ուր գետինը կը սկսի դաշտանալ, Եկեղեցի մը կայ, բլրան մը վրան։

Անոր քովը հորի նման խորունկութեամբ քարայր մը կը տեսնուի։ Կարծիքը այն է որ՝ Cerda [սէրտա] անուն [իմա՛ Տրդատ] Հայաստանի թագաւորը այդ փոսին մէջ նետել տուաւ Ս. Գրիգորը, որովհետեւ չէր ուզած ծնրադրել կեղծ աստուածներուն յանդիման։

Այս Եկեղեցւոյն և Երեւանի միջեւ կը տեսնուին արքայանիստ Արտաշատ (Artaxata) հին քաղաքին աւերակները, որոնք կը վկայեն անոր մեծութեան։ Հոն կան նաեւ հոյակապ պալատի մը մնացորդները։

Ժամանակն է այլ եւս երեք Եկեղեցիներէն երեք մղոն անդին գտնուող Երեւանին վրայ խօսիլ որ այդ կողմէն պարսկաստանին առաջին քաղաքն է, ինչպէս անոր հանդիպակաց Երզրումը Կ. Պոլսէն Իսպահան գնացող ճամբուն տաճկական վերջին քաղաքն է »։

***

Փոխանակ յաճախակի ընդմիջումներով ընթերցողին ուշադրութիւնը ցրուելու՝ լաւագոյն համարեցի ֆրանսական բնագրին այս վերջին մասին վերաբերեալ ծանօթագրութիւնները թողուլ իբր վերջաբան այս անգամուան գրութեանս։

Ալիշանին « Արարատ » ստուար և թանկագին հատորէն կարելի է ստանալ Դեղարդայ Վանքին, որուն հնագոյն անունն է Այրի Վանք, ստոյգ և ընդարձակ տեղեկութիւնները՝ հանդերձ այդ Սրբավայրին գտնուած տեղւոյն, գեղարդաձորին և գեղարդասարին, դժնեայ տեսարանին. և անոր Եկեղեցւոյն գծագրութիւնները։

Բայց մասնաւորապէս՝ Վարգան պատմիչին որակած « գեղարդն աստուածամուխ ներկեալ արեամբ կենարարին » Ս. Տէգին երկու գծագրութիւնները, որոնք իրարմէ կը տարբերին։

Անոնցմէ մին Մօրիէ Անգղիացիին կը պատկանի, որ 1813 թուականին այդ տեղերը այցելեց, երկրորդը՝ Դավէռնիէին, որ Եւրոպացի մատենագիր ուղեւորներուն երկրագոյնն է, ինչպէս Ալիշանն ալ կը հաստատէ։

Եւ կարեւորը այն է որ Դավէռնիէի այցելութեան ատեն այդ գեղարդը Այրի Վանքին մէջ պահուած էր. մինչդեռ Մօրիէ Էջմիածնի մէջ զայն գծագրեց։ Հետաքրքրական էր ստուգել թէ այդ երկուքէն ո՞րն է աւելի ճիշդը։ Առ ի չգոյէ ուրիշ միջոցի, Դավէռնիէին՝ որ քաջ փորագրողի մը զուգակն էր, տեղւոյն վրայ գծածին հաւատարիմ ընդօրինակութիւնը կու տամ ընթերցողիս [3], առ ի բաղդատութիւն Մօրիէին տուածին [Արարատ. էջ 348]։

Միեւնոյն էջին մէջ կը գտնուի նաեւ Դավէռնիէի դէմքը, որուն ոտնկայ պատկերը անոր Մատենաշարին 1713ի տպագրութեան առաջի հատորին սկիզբը դրուած է՝ ուղեւորի եզական տարազով։

Ահաւասիկ Ալիշանին վկայութիւնը. « Ի կէս դարու՝ յամի իբր 1655, առաջին Եւրոպացի ուղեւոր՝ Փրռանկն Դավէռնիէ եկն ի կողմանս. և ո՛չ միայն յիշէ զվանսն և զեկեղեցին հանդերձ ստուար սեամբքն համակ քարաժեռն հատեալս, և զանունսն գեղարդ [kickart] և կէօր–կիչ, այլ և ընծայէ զպատկեր նորին Սուրբ տիզին, զոր առ

(3) Այդ գծագրութեան բլիշէն՝ հրատարակուած է արդէն Թերթիս նախընթաց թիւին մէջ, էջ 157։

digitised by R.A.R.@

ետեղ գծագրեաց, որպէս և յետ աւելի քան զարու կիսոյ՝ Մօրիէ Անգղիացին յիշմիածին »։

Ս. Գրիգոր Լուսաւորչի թուականէն ալ թերեւս առաջ, և անոր յաջորդող զարերուն՝ Քրիստոնեայ մեր նախնիքը որպիսի՛ լերկ և խոժոռ վայրերու մէջ ապաստան փնտռելնուն վրայ գաղափար մը գոյացընելու համար՝ գեղարդաձորին օտարներէն տրուած նկարագրութիւնները բաւական կը սեպեմ՝ անոնցմէ մի քանի հատուածներ « Արարատ »էն քաղելով։

« Ի սպառ վայրենի և մեծասքանչ տեսիլ », կը գրէ Մօրիէ Անգղիացին 1813ին, իսկ անոր համազգին, Քէր Բորդը, որ 1819ին այս տեղերը այցելած է, սարսափահար տպաւորութեան ներքեւ կը նկարագրէ բնութեան ստորերկեայ խլրտումներուն գործած ահաւոր քակտումը։

« Խիզախագոյն և անալոցագոյն [ժանտատեսիլ] քան զամենայն ձոր՝ զոր իմ տեսեալ էր. յառաջնումն անդ ակնարկութեան թուէր ինձ տեսանել աւերակ մեծի ինի տիտանեան քաղաքի ի նախաջրհեղեղեայն աշխարհի. այնքան բերդաձեւք, կարկարակոյտք և վեր սեպացեալ բարձունք, ամենորակ ձեւօք կոշկոճեալք և ցցեալք՝ ի միջի կից առ կից խարսխաց իւրեանց՝ պաշարեալ փակելով զանձուկ՝ այլ սաստկահոս, հեղեղատն Գառնոյ, և ի վերայ միոյ անհեղեղ սարաւանդեալ քարաժեռի կառուցեալ կայր բերդաձեւ ղղեակն, կամ որպէս ընակիչք կողմանցն ասեն՝ Սարաւոյթն Տրդատայ... Անճառնի ապառաժիցն կարկառք, յորոց վերայ աշտարակքն ամբառնային մեծագոյն մասամբ պասալտեան սիւնքն են և համօրէն շարք լերանցն յամենայն կողմանց ձորաձովին՝ ձգեալ ընդ արեւելս հիւսիսոյ՝ յաղբերակունս անդ գետոյն, հերձակատուրք և կուտակեալք են նովին նիւթով, որոյ խաւ ի խաւոյք նշմարին ընդ որ կողմն և աչք ձգիցին... բովանդակ ասել, թուի ինձ եթէ այսպիսի զանազանեալ մեծատարած պատկեր այսքանեաց տարօրինակ արգասեաց նեղգործութիւն բնութեան ո՛չ այլ ուրեք բնաւ երեւիցի... »։

Այս երկու Անգղիացիներէն վերջը Հելուետացի Տիւպուան, 1834ին Այրիվանքը այցելած է։ Նախորդներուն նման ան ալ զարմանահար կը մնայ։ Թէպէտեւ իրեն հայրենքին և դեռ աւելի անոր յարակից Գօլգոթեան մեծատարած լեռնակարկառին մէջ գեղարդաձորին նման խորափոր փլուզումներ, թաւալումներ, շրջում և խորտակումներ տեսնելու առիթը նա ունեցած էր։

« Գետաձորն Գառնայ, կը գրէ, մերձ յակունս գետոյն խորանայ յանդնղոց յանդունդս. խանձակիզեալ տախտք քառաժայռից խառնեալք ի հոսուածս լաւայից՝ վերամբառնան ուղղաբերձք, կուտակեալ գիրերեալ աստիճանաձեւ, հերձակատուր կողիւքն և բազմախութ կատարօքն կարկառելով ի վերայ վըհից. բովանդակ շարք սուր կոթողից և բրգանց՝ մեծագունից քան զեգիպտականն՝ պսակեն պրշակս սպառնահայեացս... Այսպիսի է մեծահրաշ և խոժոռազեղ երեւոյթ վայրաց՝ որ նախապատրաստէ զմիտս ի մատոյց սրբոյ մենաստանին։

Զառաջինն չերեւեսցի նա քեզ, այլ շուրջ եկեալ զանկեամբդ և անցեալ ընդ ցցուեալ կարկառոցդ, տեսցես զայն ի խորուրջ ձորոյն, և նշմարելով զոր մարթն է նշմարել աչօք ի շինուածոյն, կռուեալս ի քարաժայռ մի՝ զետեղեալ յանձուկ զարատափի յարդարելոյ ի բնութենէ և կարկառեալ ի գահավիժանս Գառնոյ գետոյ։ Եւ ահա առաջ լինի քեզ զուռն մտիցն, մեծ և խաչազարդ. յաջմէ կողմանէ երկայն շինուած, յորում էին խցկունք միանձանցն, և այլն... »։

Եւ Ալիշան կը սկսի գրաբար՝ կը հակցուի, Գեղարդայ վանքին նկարագրութիւնը, մասամբ մը Տիւպուայէն առնելով, և մասամբ մ՝ալ, հաւանականաբար, քաջատեղեակ Հ. Ներսէս Սարգիսեանէն օգտուելով։ Բանզի, անմահ յիշատակի արժանի այդ բազմավաստակ Մխիթարեանը, իր կրօնակից այդ եղբօրը նման՝ ոտն առ ոտն Հայաստանը չէր պտտած, և ո՛չ իսկ Կ. Պոլսէն անդին Արեւելքը այցելած։ Ս. Ղազարի վանքին փոքրիկ խցիկէն՝ մտքի սլացքով և հայրենատենչ սիրով, սաւառնաթեւ կը շրջէր իր տեղագրած վայրերը։

« Ինչպէս կը նշմարուի, կը գրէ, յառաջիկայ պատկերէդ, բուրգերով ամրացած պարիսպ մը կը շրջապատէ Այրի Վանքը. պարիսպ մը կը շրջապատէ Այրի Վանքը. որուն հիւսիսակողմը բարձրանիստ ապառաժի մը վրան նստած է. իսկ արեւմտեան կողմը վանքին վրան յառաջակարկառ բարձրաբերձ քարաժայռի մը կրթնած է։ Միւս կողմերը նստապոյն են. փոքր դուռ մը արեւելեան կողմէն գետին վրան կը հանէ, որ մի քանի քայլ հեռուն « ահեղ խոխոր մի քանի քայլ հեռուն « ահեղ խոխոր էջ »։ Ջանօք հուն գործէ ընդ անդնդախոր էջս »։

Իսկ Արեւմտեան կողմը կը գտնուի ուաղ դուռը, զոր Արարատին մէջ կը տեսնաս, ուրկէ մտածիդ պէս զէմդ կ՝ելլայ Ժամատունը « մեծ սրբատաշ վիմօք որ յարակից տաճարաւն և հնգեգումբք ի վերայ նոցին փոքրածոյ եկեղեցւօքն, կամ մատրամբք, գործէ զհռչակեալ հօրն ակեղեցիս, որպէս կոչի երբեմն համօրէն մեծ նստատանն »։ Ըստ Ալիշանի, լերան սրտին մէջ քարայրի [այր = ռմկ. մաղարայ] նման փորուած շինութեանց պատճառով՝ այդ Սրբատեղին Այրի Վանք կոչուած էր։ Յետոյ կը նկարագրէ եկեղեցին. անոր յատակաձեւին վրան գետեղուած ստուար սիւները, ասոնց վրան նետուած լայնաբաց կամարները՝ որոնք « ամբառնան տափարակ իմն կիսաբոլոր և քառակուսի գմբէթ, մեծամեծ խորշխորշեայ ձեղուամբ որ հանդերձ պարզութեամբն ունի և մեծ վայելչութիւն և գրեթէ միակ է յիւրում տեսակի »։ Միեւնոյն տպաւորութեամբ գրած է նաեւ Հելուետացի Տիւպուան։ « Une coupole carrée, ornée de caissons d'un travail magnifique et presque unique dans son genre ». *Dubois* III. 393.

Պռոֆ. ԼԵՒՈՆ ԿԻՒՐԵՂԵԱՆ

Ազգոյ « Վիլլա Արարատ »

Բան բարեկենդանին նախօրեակը, ըստ Եւրոպացւոց

7 Փետր. 1948

ՏԽՐՈՒԹԻՒՆ ԱՂՔԵՐՈՒ

Կը սիրեմ ես աչքերուդ խոր տխրութիւնն
Աստղերու պէս որոնք արեւ չեն տեսներ.
Կ՝ուզեմ գրկել սրտէդ մեկնող ալիքներ՝
Այնքան նըման աշնանային գոյներուն։

Կը մերձենայ թերեւս գիշեր մ՝անվախճան
Օրերդ անոյշ թանձրը քօղով պատելու.
Բայց քու հոգիդ նըման խոշոր աստղերու
Պիտի ծագի նոր երկընքի մը վրան։

Անկէ անդին դուն կը տեսնես անծանօթն
Այնքան մեզի խորհրդաւոր և գաղանի.
Այս է մեկ էջն ալ մեր կեանքին հրաշալի,
Այս է մեկ էջն ալ մեր կեանքին հրաշալի,

Գիշերէն վերջ տեսնել պայծառ առաւօտ։
Եւ մահը միշտ հաշտ է արտում աչքերուն։
Ինչպէս ըստուերն ուղեւորի քայլերուն։

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@